

Հոս բնաւ շուն չկայ. փողոցներու մէջ կատուները կը պտըտին եւ տուններու մէջ ալ մուկերը: Կղզւոյն մէջ առատ կով կայ. բաւական էշ ալ կգտնուի, ինչպէս նաեւ այծեր: Այս կովերն, էշերն եւ այծերն կանաչ խոտ եւ ծառ չեն թողուր կղզւոյն մէջ: Եթէ լուսին չեղած գիշեր մը կղզւոյն մէջ պտըտելու ելնես՝ կովերը մագերդ կփրցունեն, մարգագետին կարծելով գլուխդ. մէկ կողմէ դուն կքալես միւս կողմէն ալ կովը մագերդ կը կտրէ:

Կովը չհասկնար, թէ մարդ ես:

–Գիշերը ի՞նչպէս պիտի հասկնայ:

–Քալելէդ չ՞ը հասկնար:

–Կարծեմ յիշողութիւնդ շատ տկար է. քիչ մը առաջ չըսի՞նք որ գետիններն ալ կը քալեն հոս:

Բնիկ կիները գեղջկական կեանք կը վարեն. ո՛չ պճնասիրութիւն գիտեն, ո՛չ բամբասանք եւ ոչ արտասահման պտոյտ:

Օղափոխութեան համար ուրիշ թաղերէն եկողներն ալ ծովեզերքին վրայ պտըտելէն եւ կօշիկ հինցունելէն զատ՝ գործ տեսած չունին: Ծովեզերքի վրայ շաբաթ եւ կիրակի իրիկունները շատ բազմութիւն կ'ըլլայ: Այս հրապարակն բոլոր միւս գեղերու հրապարակներէն ամենէն պարկեշտն է:

Կղզւոյն օդն այնչափ մաքուր եւ առողջարար է, որ եթէ բժիշկ մը գայ հոն՝ երկու օրուան մէջ կմեռնի... անօթութենէն:

ԻԱ.

ՊՕՅԱՃԻ ԳԻԻՂ

Այս գիւղին ազգայինները ժամանակաւ այնչափ կքնանային, որ շատ մը բժիշկներ իրենց չքնացող հիւանդները հոս կղրկէին: Ոմանք ալ կպնդէին, թէ Եպիմենիդէսը հոս ծնած ըլլայ: Չհաւատալու բան չկայ. իրենց շատ քնանալուն ամենահզօր մէկ փաստն ալ այս էր, որ հոն բնաւ թաղականի կռիւ լսուած չէր. եթէ չքնանային՝ կարելի՞ էր միթէ որ կռիւ չհանէին եւ իրենց աղաղակներովն լրագիրներու էջերը չլեցնէին:

Բայց քանի մը ժամանակէ ի վեր այս գիւղն արթնցած է շնորհիւ երիտասարդութեան, որ ընկերութիւն մը հաստատած է՝ գիւղին վարժարանը յառաջ տանելու համար եւ որ վերջերս իւր հաշուեցուցակն ալ հրատարակած է: